

Գ. ԴԻՄԻՏՐՈՎ

ՊԱՅՔԱՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՃԱԿԱՏ
ԸՆԴԴԵՄ ՖԱՇԻԶՄԻ
ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

31 JAN 2018

Գ. ԴԻՄԻՏՐՈՎ

327.3

ՊԱՅՔԱՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԱԿԱՏ
ԸՆԴԴԵՄ ՖԱՇԻԶՄԻ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ

ՀԱՅԿՈՒՍՅՐԱՏ □ 1937 □ ՅԵՐԵՎԱՆ



11-286889r

Г. ДИМИТРОВ
НАРОДНЫЙ ФРОНТ БОРЬБЫ
ПРОТИВ ФАШИЗМА И ВОИНЫ

Армпартиздат, Ереван, 1937

I

Ֆաշիզմի և սլատերազմի դեմ պայքարելու ժողովրդական ճակատի այն քաղաքականութիւնը, վոր հռչակեց Կոմունիստական ինտերնացիոնալի VII կոնգրեսը, ուժգին արձագանք դտավ բոլոր յերկիրների աշխատավոր մասսաների մեջ: Այդ քաղաքականութեան դործնական իրականացումը Ֆրանսիայում և Իսպանիայում ակնբախ ապացույց տվեց, վոր ռեալ հնարավորութիւն կա ժողովրդական ճակատի գոյութեան համար, և ե՛լ ավելի բարձրացրեց այդ ճակատի ժողովրդականութիւնը:

Այժմ չկա մի յերկիր, վորտեղ ժողովրդական ճակատի դադարեալն որսովուր ավելի ու ավելի շատ կողմնակիցներ չգտնի բոլոր նրանց մեջ, ում համար թանգ են դեմոկրատիան ու ազատութիւնը, բոլոր նրանց մեջ, ովքեր ժողովուրդների միջև խաղաղութիւն պահպանելու կողմն են: Ժողովրդական ճակատ ստեղծելու ձգտումն աճում է նաև այնպիսի յերկիրներում, ինչպես Ճապոնիան և, վորտեղ բուրժուական-դեմոկրատական հեղափոխութիւնը դեռ ամենևին էլ չի ասել իր վերջին խոսքը, վորտեղ ֆաշիստական-ֆեոդալական գլխավորականութիւնն իր ավանտյուրիստական քաղաքականութեամբ, Չինաստանի տերիտորիաների գավթումով և մեծ Խորհրդային Միութեան օսհմանազմի վրա պրովոկացիոն յերույթներ կատարելով՝ ճապոնական ժողովրդին մղում է ամենաստակալի աղետների անդունդը: Այդ ձգտումն աճում է նաև, այսպես կոչված, բուրժուական դեմոկրատիայի կլասիկ յերկիրներում, ինչպես Մեծ Բրիտանիան և, վորտեղ ժողովուրդների բախտն ավանդաբար տնորինել են մոնոպոլիստական կապիտալի յերկու կուսակցութիւնները—պահպանողականները և լիբերալները, վորոնք աղգային ու միջաղգային մասշտաբով ռեակցիոն քաղաքականութիւն վարելով՝ դեմոկրատիայի ու խաղաղութեան թաղումն են սլատարաւում:

Ժողովրդական ճակատի քաղաքականութիւնն հսկայական պատմական նշանակութիւնը, ճշտութիւնը և ժամանակին լինելը, թերեւս, առանձնապէս ցայտուն կերպով յերեւան յեկան այն վերաբերմունքի մեջ, վոր պրոլետարիատի թշնամիները, դեմոկրատիայի և խաղաղութիւն թշնամիները, պատերազմի ֆաշիստական հրճիւնները—ամբողջ միջազգային ռեակցիոն ցուցաբերում են դեպի այդ քաղաքականութիւնը: ՄԱԿ կոնդրեսի վորոշումները չափազանց անհանգստացրին կապիտալիստական յերկիրներէ կառավարութիւններին, բուրժուական կուսակցութիւններին, պետական գործիչներին ու քաղաքականներին, մամուլի բուրժուական օրգաններին:

Բոլոր յերկիրներէ ռեակցիոններնը զրպարտանքի ու հալածանքի չլսած կամպանիա ծավալեցին կոմունիստական ինտերնացիոնալի դեմ ու Ժողովրդական ճակատի բոլոր կողմնակիցներէ դեմ: Ֆաշիստական Գերմանիայում պտեղծվել և նույնիսկ հաստատվել կազմակերպութիւն—«Անտիկոմիտները»—Կոմունիստական ինտերնացիոնալի դեմ միջազգային պրոպագանդա մղելու և Ժողովրդական ճակատի քաղաքականութիւնն դեմ պայքարելու համար: Նյուրենբերգի նացիոնալ-սոցիալիստական կոնդրեսում Հիտլերը, Գերբերսը և Ռոզենբերգն առանձնապէս կատաղի ուրմբաձգութիւն սկսեցին ֆաշիստական դիկտատուրային սպառնացող Ժողովրդական ճակատի վտանգի դեմ, ընդհանրապէս դեմոկրատիայի դեմ: Իրենց հարձակումների սուր ծայրն ուղղելով Ֆրանսիայում և Իսպանիայում արդեն իրականացված Ժողովրդական ճակատի դեմ՝ նրանք դրանով իսկ միաժամանակ իրենց անհանգստութիւնն ու յերկյուղն են արտահայտում Ժողովրդական ճակատի՝ բուն Գերմանիայում կազմավորվող շարժման հանդէպ: Հոռմի պապը և զանազան յերկիրների «սրբազնազույն» յեպիսկոպոսները շտապեցին հանդէս դալ կոնդակներով ու յեկեղեցական քարոզներով, վորպէսզի պաշտպանեն իրենց հոտը «ահալոր բոլշևիկյան վտանգից»—Ժողովրդական ճակատից: Ժողովրդական ճակատի հարցը չի վերանում կապիտալիստական յերկիրների մամուլի եղբրից և ամենաաշխույժ քննարկման առարկա յե հանդիսանում:

Դասակարգային թշնամին արագ զգաց ու հասկացավ, թե ինչպիսի հսկայական վտանգ և ներկայացնում նրա համար Ժողովրդական ճակատը, բոլոր հակաֆաշիստական ուժերի միավորումը: Քանի դեռ պրոլետարիատը բաժան-բաժան է, քանի

դեռ նա անջատված է քաղաքի ու գյուղի միացած աշխատավորներից, քանի դեռ նա ճիշտ մոխհարաբերութիւններ և համագործակցութիւն չի հաստատել յերկրի մյուս դեմոկրատական ուժերի հետ,—մի բուն ֆինանսական ու արդյունաբերական մազնաւորի համար, ֆաշիստական բուրժուազիայի համար, այնքան էլ դժվար չէ, ինչպէս ցույց տվեց Իտալիայի, Գերմանիայի և Ավստրիայի օրինակը, ջախջախել բանվորական շարժումը, մաս առ մաս Ժողովրդի առանձին խավերի դասաստանը տեսնել և վրէժացնել դեմոկրատիան: Ֆաշիստներին հաջողվեց կիրառել հայտնի նենգ կանոնը—«բաժանի՛ր և իշխի՛ր»:

Բայց յերբ բաժան-բաժան պրոլետարական ջոկատները կոմունիստների նախաձեռնութիւնը ձեռք-ձեռքի յեն տալիս ընդհանուր թշնամու դեմ միատեղ պայքարելու համար, յերբ միասնաբար հանդէս յեկող բանվոր դասակարգն սկսում է դյուղացիութիւն, մանր բուրժուազիայի և բոլոր դեմոկրատական տարրերի հետ միասին գործել Ժողովրդական ճակատի ծրագրի հիման վրա, այն ժամանակ ֆաշիստական բուրժուազիայի հարձակման համար անհաղթահարելի խոչընդոտներ են պտեղծվում: Աճում, բարձրանում է մի ուժ, վորն ի վիճակի յե մճուկան դիմադրութիւն ցույց տալու ֆաշիզմին, թույլ չտալու, վոր նա իշխանութիւն գլուխ անցնի բուրժուական դեմոկրատիայի յերկիրներում, և տապալելու նրա բարբարոսական տիրապետութիւնն աշխուղ, վորտեղ այդ տիրապետութիւնը հաստատված է:

Ժողովրդական ճակատի իրականացումը, ինչպէս այդ յերևում է Ֆրանսիայի և Իսպանիայի օրինակից, ազդանշում է բեկում մի կողմից պրոլետարիատի և մյուս կողմից ֆաշիստական բուրժուազիայի միջև գոյութիւն ունեցող ուժերի հարաբերակցութիւնն մեջ, հոգուտ աշխատավորների միլիոնավոր մասսաների: Ժողովրդական ճակատը հնարավորութիւն է տալիս մանր բուրժուազիային, դյուղացիութիւնը, դեմոկրատական ինտելիգենցիային վո՛չ միայն դիմադրելու ֆինանսական կապիտալի կլիկի խնամակալութիւնն ու ճնշմանը, այլև վոտքի կանդնելու նրա դեմ՝ ի պաշտպանութիւն իր կենսական շահերի և իրավունքների, հենվելով բանվոր դասակարգի հետ ազգային ու միջազգային մասշտաբով մարտական համագործակցութիւն տեսնելու վրա: Ժողովրդական ճակատը յերբ և ցույց տալիս այն դրութիւնից, վորն անելանելի յեր թվում մանր-բուրժուա-

կան խաղերին, վորոնք իրենց դատապարտված էին համարում յենթարկվելու Փաշիստական տիրապետութեանը: Ժողովրդական ճակատն ողջում է բանվոր դասակարգին՝ խուսափելու քաղաքական մեկուսացումից, վորպիսի դրութեան գլխավոր պարտքը մղում է նրան բուրժուազիան. ժողովրդական ճակատն ամենապատասխան պայմաններ է ստեղծում պրոլետարիատի պատմական դերը կատարելու համար, — պայմաններ՝ գլխավորելու իր ժողովրդի պայքարն ընդդէմ մի բուռն ֆինանսական մագնատներին, խոշոր կապիտալիստներին և վարլածիստներին, լինելու չափարտված դեմոկրատական հեղափոխութիւնների և պրոգրեսի ու կուլտուրայի բոլոր շարժումների ավանդարդը: Դասակարգային կռիւլը շահագործողների ու շահագործողների միջև, այդպիսով, ստանում է անսահման ավելի լայն բազա և հզոր թափ:

Մինչդեռ՝ պառակտումը բանվոր դասակարգի շարքերում, գործողութիւնների միասնութեան բացակայութիւնը նրա և ժողովրդի մնացած աշխատավոր խաղերի միջև Փաշիստական համար ճանապարհ է հարթում դեպի իշխանութիւնը, — պրոլետարական շարքերի միասնութիւնը, ժողովրդական ճակատի ստեղծումն ապահովում է դեմոկրատիայի հաղթանակն ընդդէմ Փաշիստական պաշտպանութեան խաղաղութիւնը պատերազմի Փաշիստական հրձիգներից և վերջին հաշիւով մաքրում է ճանապարհն այն բանի համար, վոր աշխատանքը հաղթանակ տանի ընդդէմ կապիտալի:

Դժվար է յերևակայել քաղաքական ավելի մեծ խաղամուտութիւն, քան դասակարգային կռիւի սկզբունքները ժողովրդական ճակատի քաղաքականութեանը հակադրելը, մի բան, վոր անում են իրենց անխելքութեան մեջ յեռանդոտ միջանի քննադատներ «ձախից»՝ Կոմունիստական Ինտերնացիոնալի ՎՊ կոնգրեսի վորոշումների վերաբերմամբ: Մենք հաճախ դիտում ենք բնորոշ մի յերևույթ, վոր մի շարք ձախ սոցիալիստներ, վորոնք հիասթափված են բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցութիւնն ունենալու սոցիալ-դեմոկրատական քաղաքականութիւնից, վորոնք հեռանում են ռեֆորմիզմի դիրքերից՝ հաճախ հակամետ են ընկնելու մի այլ ծայրահեղութեան մեջ, զոհ դառնալով աղանդավորութեանն ու ձախիկ խոտորումներին: Ժողովրդական ճակատի քաղաքականութիւնը սխալ կերպով նույնացնելով բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցութիւնն ունենալու քաղաքականութեան հետ՝ նրանք հանդես են գալիս «զուտ դասակարգային բանվորական քաղաքականութեան» ոգտին: Մանր բուրժուազիայի, գյուղացիութեան ու ինտելիգեն-

ցիայի դեմոկրատական խաղերի հետ բանվոր դասակարգի միատեղ պայքարն ընդդէմ Փաշիստական հայտարարում են վորպէս հրաժարումն դասակարգային կռիւի դիրքերից: Բայց այդ ամենն էլ չի վկայում այն մասին, թե ժողովրդական ճակատի քաղաքականութիւնը և բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցութիւնն ունենալու քաղաքականութիւնը նույնական են, այլ վկայում է այն մասին միայն, վոր անհրաժեշտ է համերոտութեամբ պարզաբանել անկեղծ ձախ սոցիալիստներին ժողովրդական ճակատի քաղաքականութեան դասակարգային իմաստը և ոգնել նրանց աղատելու քաղաքական կարճատեսութիւնից, վորը միայն ոգուտ է բերում Փաշիստական և ռեակցիային ընդհանրապէս:

II

Ինչպէս ասվում էր դեռ Կոմունիստական Ինտերնացիոնալի ՎՊ կոնգրեսում, ժողովրդական ճակատը զանազան կերպ է ստեղծվելու զանազան յերկիրներում, նայած տվյալ յերկրի պատմական, սոցիալական և քաղաքական առանձնահատկութիւններին և կոնկրետ իրադրութեանը: Ժողովրդական ճակատի ձևերն ու մեթոդները վոչ-քննադատորեն ընդորինակելը և մեխանիկորեն մի յերկրից մյուսը փոխադրելը կարող է միմիայն դժվարացնել ժողովրդական ճակատի ստեղծումը, ընդլայնումը և ամրացումը:

Սակայն կապիտալիստական յերկիրների մեծամասնութեան համար, ինչպէս փորձը ցույց է տալիս, հավասարապէս ճիշտ է այն, վոր

պոսիւն՝ ժողովրդական ճակատի ստեղծումը հնարավոր է Փաշիստական դեմ մղվող իսկական, իրական պայքարում:

Երկրորդ՝ ժողովրդական ճակատն այնքան ավելի շուտ կիրադործվի և այնքան ավելի լայն կընդգրկի աշխատավոր մասսաներին, վորքան ավելի վճռականորեն բանվոր դասակարգն ինքը հանդես կգա միասնաբար, վորքան ավելի շուտ նրա կազմակերպութիւնները, և ամենից առաջ մասսայական պրոֆմիութիւնները, կոմունիստական ու սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնները կիրականացնեն գործողութիւնների միասնութիւնը Փաշիստական դեմ մղվող պայքարում:

Երրորդ՝ ժողովրդական ճակատը կընդարձակվի և կամրանա նրա ծրագրի, այն է՝ աշխատավորների շահերը պաշտպանելու, Փաշիստական ու պատերազմի Փաշիստական հրձիգների դեմ դեմո-

կրատիան և խաղաղությունը պաշտպանելու ծրագրի իրագործման համեմատ .

չորրորդ՝ ժողովրդական ճակատի հաջողությունները լիովին կախված են նրա շարքերի համախմբվածությունից, նրան մասնակցող այն մասնաների և կազմակերպությունների քաղաքական ու կազմակերպական պատրաստվածությունից, վորոնք պետք և պատրաստ լինեն իր ժամանակին հետ մղելու Փաշիզմի կողմից յեկող ամեն մի հարված, չսպասելով Փաշիզմի ընդհանուր հարձակմանը :

Իսպանական ժողովրդի ու Փաշիստ խռովարարների միջև ծավալվող զուտեմարտի պայմաններում այժմ, յերբ Փաշիզմը գլուխ և բարձրացնում կապիտալիստական յերկիրներում և ամենից առաջ Ֆրանսիայում, Չեխոսլովակիայում ու Բելգիայում, բանվոր դասակարգի բարձրագույն պարտականությունն այն և, վոր ամեն կերպ արագացնի ժողովրդական ճակատի իրականացումն ու ամրապնդումը՝ գործողությունների միասնություն հաստատելով ազգային ու միջազգային մասշտաբով : Կոմունիստների պարտքն է՝ անել այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ և, վոր պետքի կարելի լինի, յեղնելով իր յերկրի պայմաններից, ոչնչելով բանվոր դասակարգին իր այդ պատմական պարտականությունը կատարելու :

Յեթե հակիրճ ձևակերպենք կարևորագույն անմիջական այն խնդիրները, վոր ամբողջ արդի իրադրությունը դնում և միջադրվային պրոլետարիատի առաջ, ապա դրանք հանգում են հետևյալին .

բոլոր ուժերով ոգնել իսպանական ժողովրդին՝ ջախջախելու փաշիստ խռովարարներին .

քայլ չտալ ժողովրդական մականի վարկաբեկում և վիժեցում Ֆրանսիայում .

ամեն կերպ արագացնել փաշիզմի և պատերազմի դեմ պայքարելու համաշխարհային ժողովրդական մականի ատեղծումը :

Այս բոլոր խնդիրներն անկողելիորեն կապված են միմյանց հետ : Սակայն, ներկա մոմենտին դրանցից ամենաանհետաձգելին և ամենահարվածայինն է՝ կազմակերպել միջազգային ողնություն իսպանական ժողովրդին, վորպեսպի նա հաղթանակ տանի Փաշիզմի դեմ :

Իսպանիայում Փաշիզմի դեմ մղվող կռիվն պատմական նշանակությունը սեղմ և դրա հետ մեկտեղ առավելագույն պարզությամբ արտահայտել և ամբողջ աշխարհի աշխատավորների ա-

ռաջնորդ ընկեր Ստալինը՝ Իսպանիայի կոմկուսի Կենտկոմի վողջույնին ուղարկված իր պատասխան-հեռագրի մեջ .

«Իսպանիայի ազատագրումը փաշիստական ռեակցիոներների նկշումից՝ իսպանացիների մասնավոր գործը չե, այլ ամբողջ առաջավոր ու պրոգրեսիվ մարդկության ընդհանուր գործն է» :

Բոլոր կապիտալիստական յերկիրների զարգացման ընթացքը մերձավորագույն ապագայում կախված և լինելու փաշիստական բռնացողների դեմ իսպանական ժողովրդի մղած կռիվ յեղից : Փաշիզմի յեկույթն Իսպանիայում՝ մի անգամ ևս ցույց տվեց, վոր Փաշիզմը վո՛չ միայն վոխերիմ թշնամի յե պրոլետարիատին, թշնամի յե խորհուրդների սոցիալիստական Հանրապետությունը, այլև թշնամի յե ամեն մի ազատություն, ամեն մի դեմոկրատիկ յերկրի, թեկուզ և վերջինիս քաղաքական ու տնտեսական կարգերը դուրս չգան բուրժուական հասարակություն չըջանալներից :

Փաշիզմը բերում և ժողովուրդների բոլոր դեմոկրատական նվաճումների վերացում, խաղաղամոլություն թաղավորության հաստատում և կուլտուրայի վոջնացում, ռասայական ցնդարանություններ և մարդատեցություն քարոզ՝ դավթողական պատերազմ հրահրելու նպատակով : Մահ ու կործանում են սերմանում այժմ Իսպանիայում ոտարերկրյա լեզեոնի խաժամուժ ամբոխը, խաբված մարտիկոցիները, վորոնք կռվում են Փաշիստ դեներալների հրամանատարությունների ներքո և դինված են Գերմանիայի, Իտալիայի և Պորտուգալիայի Փաշիստական կառավարիչների կողմից, ինչպես նաև Գերմանիայի ու Իտալիայի ուղարկած զորամասերը : Հանրապետական բանակի մարտիկները Մադրիդի պարիսպների տակ, Կատալոնիայում, Աստուրիայի լեռներում և ամբողջ թերակղզում պաշտպանում են վո՛չ միայն հանրապետական Իսպանիայի ազատությունն ու անկախությունը, այլև բոլոր ժողովուրդների դեմոկրատական նվաճումները և խաղաղությունը գործը պատերազմի Փաշիստական հրճիղներից :

Իսպանական դեպքերի հատուկ նշանակությունն այն և, վոր նրանք ցույց տվին պրոլետարիատի գործողությունների միասնության մեծ ուժը, ժողովրդական ճակատի ուժը Փաշիզմի դեմ մղվող պայքարում : Չե՞ վոր այժմ բոլորովին պարզ և յուրաքանչյուրի համար, վոր, յեթե Իսպանիայում ձեռք չբերվեր կոմունիստական, սոցիալիստական ու անարխիստական բանվորների գործողությունների միասնություն, յեթե վոր չստեղծվեր իսպանական ժողովրդի պայքարի լայն ճակատ՝ սկսած կոմունիստ-

ներից մինչև ձախ հանրապետականները, ապա Փաշխատ դեն-
րալները վաղուց հաստատած կլինեյին իրենց դիկտատուրան։
Նրանք բանվորների, աշխատավորների և բոլոր դեմոկրատական
տարրերի նկատմամբ արյունոտ դատաստան կտեսնեյին ամբողջ
Իսպանիայի տերիտորիայում։ Նրանք յերկիրը մատնած կլինեյին
միջնադարյան ռեակցիայի և ինկվիզիցիայի սանձարձակ խրախ-
ճանքին, յերկիրը կդարձնեյին դեմանական և խտալական Փա-
շխատների տնտրինության ոբյեկտ, վերջիններիս կհանձնեյին Մի-
ջերկրական ծովի կարևորագույն ստրատեգիական կետերը և Իս-
պանիան կդարձնեյին իրենց ավազակային ռազմական պլանների
իրագործման պլացդարմ։

Բայց Իսպանիայում Փաշխատական խռովարարները և Բեռ-
լինի ու Հոռմի նրանց ներշնչողները հանդիպեցին այն ուժին,
վորը փակեց նրանց ճանապարհը։ Նրանք հանդիպեցին ժողովրդ-
դական ճակատի զինված դիմադրությանը։ Իսպանական ժողո-
վուրդն այժմ իր հերոսական պայքարով ցույց է տալիս, թե ի՞նչ-
պես պետք է պաշտպանել դեմոկրատիան Փաշիզմի դեմ։ Իսպա-
նական ժողովրդի հաղթությամբ չահագորգոված են բոլոր նրանք,
ովքեր չեն ուզում, վոր իրենց յերկրում Փաշխատական բարբա-
րոտություն լինի։ Իսպանական ժողովրդի հաղթությունը—այդ
ամբողջ միջադեպին դեմոկրատիայի հաղթությունն է, պրո-
դերսի ու կուլտուրայի հաղթությունն է Փաշխատական ռեակցիա-
յի նկատմամբ, խաղաղության ճակատի հաղթությունն է պատե-
րազմի Փաշխատական հրճիգների նկատմամբ։ Այդ հաղթությունը
կամրացնի ժողովրդական ճակատը Փրանսիայում և ամուր հար-
ված կհասցնի Փաշիզմին բոլոր յերկիրներում։ Իսպանական ժո-
ղովրդի հերոսական պայքարը—ակնբախ և համոզիչ նախադու-
շացում է Փաշխատական մութ ուժերին այն յերկիրներում, վոր-
տեղ տեսնուրեն Փաշխատական հեղաշրջումներ են պատրաստվում,
նախադուշացում է, վոր անցել են այն ժամանակները, յերբ
Փաշիզմը կարողանում եր ոգտագործել բանվոր դասակարգի և
աշխատավորների շարքերի միավորված չլինելը, հանկարծակի
բերել ժողովրդին, խաբել քաղաքականապես հետամնաց խավե-
րին և գրավել պետական իշխանությունը։ Այդ պայքարը ցույց
է տալիս, վոր այն դեպքում, յերբ գոյություն ունեն հաստա-
տուն ժողովրդական ճակատ և բանվոր դասակարգի համերաշխ
միջադեպին գործողություններ, անհնար է Փաշխատական տիրա-
պետություն հաստատել մի ժողովրդի վերաբերմամբ, վորը պատ-
րաստ է պաշտպանելու իր ազատությունն ու անկախությունը։

Այսպիսով, դեմոկրատիայի ու խաղաղության գործը Յեվրոպա-
յում, Փաշիզմի ու պատերազմի դեմ պայքարելու գործը բոլոր
յերկիրներում հաղարավոր թելերով անքակտելիորեն կապված է
Իսպանիայի ժողովրդական ճակատի շահերի հետ,—Իսպանիայի,
վորի քաջարի մարտիկներն այժմ զենքը ձեռքին պաշտպանում են
հանրապետությունը, ապահովում են իսպանական հեղափոխու-
թյան հաղթանակը։

III

Վերջին ժամանակվա բոլոր փաստերը և ամենից առաջ իս-
պանական դեպքերի դասերը ասում են, վոր հասել է ժամա-
նակը, յերբ դեմոկրատիան պետք է պաշտպանել Փաշխատական
հարձակումից բոլոր միջոցներով, վորոնց թվում նաև զենքը
ձեռքին։ Այս պետք է յուրացնեն և լավ հիշեն բոլոր բանվորներն
ու աշխատավորները, բոլոր նրանք, ովքեր չեն ուզում Փաշի-
տական ստրկացման և վայրագ բռնության զոհեր դառնալ։

Բանն ամենևին ել այն չէ, թե դեմոկրատիայի ու խաղա-
ղության կողմնակիցները զինված կույի յերկրպագուներ են հան-
դիսանում ընդհանրապես, այլ այն է, վոր Փաշիզմը քաղաքա-
ցիական պատերազմ է հրահրում յերկրի դեմոկրատական ուժի-
մի դեմ, ավերածնը ու մահ է բերում և հարկադրում է ժո-
ղովրդին՝ զինված ձեռքով պաշտպանելու իր կյանքը, ազատու-
թյունն ու անկախությունը։

Հարկավոր է հիշել, վոր այժմ խոսքը Փաշիզմի վորեն հե-
ռավոր սպառնալիքի մասին չէ, այլ այն մասին է, վոր Փաշիզմը,
վորն առդեն տեղորոշատական դիկտատուրա յե հաստատել այն-
պիսի խոշոր յերկիրներում, ինչպիսիք Գերմանիան և Իտալիան
են, և ձգտում է նույն բանին հասնել Իսպանիայում, որ—ավուր
պատրաստում է բանվորական շարժման ջախջախում և դեմո-
կրատիայի վոջնացում մյուս յերկիրներում ու համաշխարհային
խմբախախտական պատերազմ է հրահրում։

Ձի՛ կարելի ընդունել, վոր Փաշիզմի կողմից իսպանական
ժողովրդի դեմ նախաձեռնված պատերազմը պատահական, մե-
կուսացած մի աղտ է։ Վո՛չ։ Այդ պատերազմը Փաշիզմի մոդ-
մից միջադեպին արենայում՝ ձեռնարկած հարձակման շղթայի
մի ողակն է։ Ձի՛ կարելի իր համար պատրանքներ ստեղծել, թե
Փաշիզմի կողմից իսպանական ժողովրդի դեմ նախաձեռնված
պատերազմը վերջինն է լինելու։ Փաշիզմը հարվածներ է պատ-

քառասուն Գրանտիայի, Բելգիայի, Չեխոսլովակիայի դեմոկրատիայի դեմ, Անգլիայի ու Շվեյցարիայի, Սկանդինավյան և այլ յեղկիրներին դեմոկրատիայի դեմ: Փաշխատական ռեալիզմներն են ամենուրեք, ինչպես յերկրի ներսում, նույնպես և յերկրից դուրս, տենդոնեն Փաշխատական խռովություններ ու հեղաշրջումներ են նախապատրաստում, այն հաշվով, վոր դրանք իրադործեն հարմար մոմենտին: Նոր իմպերիալիստական պաշտեքով նախապատրաստելու, ուրիշ տերիտորիաները դրամելու և օտար ժողովուրդներ իրեն յենթարկելու համար, Փինանասական կապիտալի ամենառեակցիոն գիշատիչ տարրերի սանձարձակ տիրապետությունն աղահուլելու համար և թորհրդային Միության դեմ «խաչակրաց արշավանք» կազմակերպելու համար Փաշիզմին անհրաժեշտ է, ինչպես ող և ջուր, ջախջախել բանվորական շարժումը, վոչնչացնել յեվրոպական դեմոկրատիան:

Դեմոկրատիայի կողմնակիցները չպետք է մոռանան, վոր հակաֆաշիստական դեմոկրատիայի բախտը Յեվրոպայում անխղճելիորեն կաշված է բանվոր դասակարգի բախտի հետ, ժողովրդական ճակատ ստեղծելու հետ: Դեմոկրատիան անխուսափելիորեն կկործանվի հարձակվող Փաշիզմի հարվածների տակ, յեթե չհենվի բանվոր դասակարգի և աշխատավորական լայն մասսաների վրա, յեթե պատրաստ չի բոլոր միջոցներով պաշտպանվելու Փաշիզմի դեմ:

Փաշիզմի հանդեպ ինչպես աղպային, նույնպես և միջադասյին մասշտաբով նահանջելու քաղաքականությունը ջուր է լցնում Փաշիզմի ջրաղացին, կործանում է բերում ժողովուրդներին, կործանում է բերում դեմոկրատիային: Այդ քաղաքականությունը հավասարապես վնաս է ինչպես նրանց համար, ովքեր նահանջում են Փաշիզմի առջև յերկրի ներսում, նույնպես և նրա առջև միջադասյին արենայում նահանջող ամբողջ պետությունների համար:

Գերմանիայի Փաշիստական կառավարողները սխառնատիրիորեն շանտաժ են անում բուրժուական դեմոկրատիայի յերկիրներին նկատմամբ, իսկ այդ յերկիրներին այժմյան կառավարողները յենթարկվում են այդ շանտաժի աղղեցությանը: Բայց պետք է իմանալ, վոր Փաշիստներն այնքան ամելի յեն լիախանում, վորքան ամելի յեն գիթումների հանդիպում և հակահարված չեն ստանում: Փաշիստները գործում են պրովոկացիայի իրենց վործված յեղանակով: Գերմանիայում նրանք հրկիզելին ռախսատաքը և աղաղակում էյին, յե կոմունիստներն են արել

այդ: Իսպանիայում նրանք խռովություն բարձրացրին պառլամենտական ռեժիմի դեմ, որինական հանրապետական կառավարության դեմ և աղաղակում են, յե քաղաքական պատերազմի պատճառը ժողովրդական ճակատն է: Փաշիստները վախեցնում են անվողնաչար յիրերալներին և յիւլամորթ դեմոկրատներին, իսկ իրենց շահույթների համար զողացող դեմոկրատական չարչիները, տաքուկ պաշտոնների կպած մինիստրները, քաղաքականներն ու յիդերները զանազան յիրերալ և դեմոկրատական կուսակցությունների չարքերից, նաև վոչ փոքրաթիվ մարդիկ Սոցիալիստական ու Սմտերդամի ինտերնացիոնալների չարքերից, յենթարկվում են այդ վախին և ամեն կերպ ուղիներ են վորոնում Փաշիզմի հետ հաշտվելու: Նրանք աշխատում են մասսաներին համոզել, յե կարելի յե կիրառել այնպիսի «միջին» քաղաքականություն, վորի ժամանակ «յե՛ դայերը կուշա լինեն, և յե՛ միջնարները վողջ մնան»: Բայց Փաշիստական գայլերին գիջումներով չես կշտացնի: Այդպիսի քաղաքականությունը անց չես կանգնեցնի: Իրականում այդ քաղաքականությունը միայն տանում է դեպի աշխատավոր մասսաների ուժերի ու կամփի դեմոքրիիզացիան:

Առանձնապես ցայտուն որինակ այստեղ ևս ցայց են ապիսիսալանական դեպքերը: Այժմ բոլորի համար պարզ է, վոր Փաշիստները, և առաջին հերթին Գերմանիայի ու Իտալիայի Փաշիստները, վորոնք խռովություն են բարձրացրել իսպանական դեմոկրատների ձեռքով, հույս եյին դրել այն բանի վրա, յե Իսպանիայի յերիտասարդ հանրապետական իշխանությունն ամուր հակահարված չի տա իրենց, և իրենց համար դժվար չի լինի յերկիրն իրենց յենթարկել, գավթել նրա բնական հարստությունները և ստրատեգիական նշանակություն ունեցող կողմները: Փաշիստները ռազմական գործողությունների գիմեյին Իսպանիայում, ոգտվելով մոտիկ անցյալում կատարած իրենց հանցավոր արարքների անպատիժ մնալու որինակներից: Ընդհանուր գիշմորական ծառայություն մտցնելը Գերմանիայում, Հոենոսյան դոտու միլիտարիզացիան, Հաբեշտանի դավթումն Իտալիայի կողմից և դրանից առաջ Չինաստանի մի մասի գավթումը ճապոնիայի կողմից, վորոնք տեղի ունեցան բուրժուական դեմոկրատիայի յերկիրների և Աղդերի Լիգայի յողովությամբ, արեցին Փաշիստ յրբերի ախորժակը և խրախուսեցին նրանց նոր ավազակային հարձակում կատարելու: Յերբեք Փաշիստները

չեյին համարձակվի քաղաքացիական պատերազմ հրահրել մյուս
յերկիրներում, դեռ, այնքապես, տանկեր, նավատորմի-
ներ և, վերջապես, զորամասեր ուղարկել, յեթե վոր իր ժամա-
նակին նրանց ձեռքերին պինդ խփեյին: Նրանք ստիպված կլինե-
յին նահանջել, յեթե վոր իսպանիայի Փաշիստական խռովու-
թյան հենց սկզբից հանդիսեյին միջազգային բանվորական
չարժման՝ միասնական ճակատով հանդես յեկող հզոր ուժին,
յեթե վոր նրանց հակահարված տրվեր բուրժուական դեմոկրա-
տիայի կառավարութուններին կողմից, յեթե վոր այդ կառավար-
ութւթյունները չմիջամտելու խաբէրայական քաղաքականությամբ
չպաշտպանեյին իսպանական հանրապետության բոլորական:

Հաճախ առիթ է լինում լսել դեմոկրատիայի կողմնակիցը
լինելու հավակնութուն ունեցող մարդկանցից այն տեսակ փա-
տարկներ, թե ժողովրդական ճակատ ստեղծելը տանում է դեպի
Փաշիստական ագրեսիայի ուժեղացումը, դեպի Փաշիզմի զինված
յեկույթի արագացումը միայն: Դրանից յեզրակացութուն է ար-
վում, — յեթե ուզում եք խուսափել Փաշիզմի բարբարոսական
տիրապետութունից, ժողովրդական ճակատ մի՛ ստեղծեք, այլ
աշխատեցե՛ք խաղաղ կերպով համաձայնության դաշ ձիտելի
ու Մուսսոլինիի հետ և ձեր սեփական ձիտելներին ու Մուսսոլի-
նիներին հետ յուրաքանչյուր յերկրում: Բայց բուրժուական դե-
մոկրատիայի յերկիրներում պրոլետարիատի ու ամբողջ ժողո-
վրդի համար չկա ամէլի սխալ և միասնակաբ ըստ, քան այդ-
պիսի վայրենավորութունի վոչխարային իմաստութունը: Այդ
վոչխարային իմաստությունը հանդում է բուրժ, անհեթեթ և
փտած մի մորալի (բարոյախոսության), — «զազանին մի՛ դըր-
դոնե՛ք, յեթե չեք ուզում, վոր նա ձեզ վրա հարձակվի»: Յեւ՛ այդ
հրեշտակ մորալը հրամցվում է սոցիալ-դեմոկրատական բան-
վորներին Գերմանիայի և Ավստրիայի աշխատավորների հենց
դաժան պարտութունից հետո: Չե՞ վոր հայտնի յե, վոր Գեր-
մանիայում և Ավստրիայում սոցիալ-դեմոկրատիայի ու պրոֆ-
միթութունների լիդերները վճռականապես հրաժարվում եյին
կոմունիստների հետ վորեւէ միատեղ դործողություն ունենալուց,
պատճառաբանելով, թե կոմունիստական փուսակցության հետ
միասնական ճակատ կազմելը միջին խաւերին կլանի բանվոր
դասակարգից, կուժեղացնի Փաշիզմի դիրքերն ու ագրեսիան,
կարագացնի նրա ընդհանուր հարձակումը, նրան կհասցնի հաղ-
թության և դեմոկրատիայի վոչնչացման: Այդ քաղաքականու-

թյան արդյունքն էլ հենց յեղան այն ծանր պարտությունները,
վորոնց հաջորդեցին գերմանական ու ավստրիական ժողովրդի
զլխին տեղացած անհամար սարսափները և թշվառությունները:
Դրա հետ միասին մենք տեսնում ենք, վոր Ֆրանսիայում ժողո-
վրդական ճակատը փակեց Փաշիզմի ճանապարհը, իսկ իսպա-
նական ժողովուրդը հենց ժողովրդական ճակատի շնորհիվ ար-
դեն հինգ ամիս է հերոսաբար պաշտպանում է իր ազատությունն
ու անկախությունը: Այդ ծանր պայքարում նա հաղթելու այն-
քան ամէլի շաներ կունենա, վորքան ամէլի վերադառնա իսպա-
նական բանվոր դասակարգը մինչև վերջը պահպանել ժողովրդա-
կան ճակատի հաստատուն միասնությունը, վորքան ամէլի նա
վերադառնա կոմունիստների, սոցիալիստների ու անարխիստների
միջև պատմականորեն առաջ յեկած տարաձայնությունները յեն-
թարկել ժողովրդի դերադույն շահին — Փաշիստական խռովու-
թյունը ճնշելու գործին, վորքան նա ամէլի վճռական հակա-
հարված կտա՝ հեղափոխության անխուսափելի ետապների վրա-
յով միասնակաբ ցատկումներ անելու այն փորձերին, վորոնց
դիմում են միքանի կարճատես աղանդավորներ, թեթևամիտ
Փանտալոններ և տրոցկիստական պրովոկատորներ: Վերջա-
պես, իսպանական ժողովուրդն այնքան ամէլի շուտ հաշիվ
կմաքրի Փաշիստական խռովարարների հետ, վորքան ամէլի ա-
րագ ու վճռականորեն նրան աջակցութուն ցույց կտա միջազ-
գային պրոլետարիատը և ամբողջ առաջավոր մարդկությունը:

Անպոգիան, ճիշտ է, ապացույց չե, բայց հաճախ այն ամէ-
լի պայծառ և պատկերավորում տվյալ դրությունը: Կարելի յե
համարձակ պնդել, վոր յեթե Լալայիզի դատավարության ժա-
մանակ, յերբ դադանացած հիտլերյան Փաշիզմի սուրը կախված
եր մեղադրվող կոմունիստների զլխին, բոլոր յերկիրների հա-
կաՓաշիստները և մենք դատարանում հետևեյինք այնպիսի
«գերիմաստուն» քաղաքականության, թե՛ «զազանին մի՛ դըր-
դոնե՛ք», — ապա գերմանական Փաշիզմն այն ժամանակ այդպիսի
բարոյական ու քաղաքական պարտություն չեր կրի, անմեղորեն
մեղադրվող կոմունիստների գլուխներն իրենց ուսերի վրա չեյին
մնա, և չեր կանխի արյունուշտ Փաշիստների նախապատրաս-
տած «բարդուղիմյան դիշերը» Փաշիզմի հազարավոր դերինների
վերաբերմամբ, վորոնք գտնվում եյին բանտերում ու համա-
կենտրոնացման ճամբարներում:

Վո՛չ, «զազանին մի՛ դըրդոնե՛ք» քաղաքականությունն անպետք

11-296889



քաղաքականութիւնն է։ Այդ քաղաքականութիւնը բոլոր պայմաններում կործանել է բանվոր դասակարգի համար, դեմոկրատիայի ու խաղաղութան համար։ Ընդհակառակը։ Ֆաշիստական գազանին հարկավոր է սանձաւարել։ Նրան հարկավոր է հակադրել ժողովրդական մականի հզոր կազմակերպված բռնուցիքը։ Նրան հարկավոր է յերկաթե դնչկալ հագցնել, վարպետի մա չկարողանա կծել։ Հարկավոր է հարվածել ու վերջնականապես վնասել ցեղերը մըմն, ժողովուրդներն դեմոկրատական միանումները փրկելու և խաղաղութիւնը պահպանելու համար։

Այդ, իհարկէ, չի նշանակում, թէ հարկավոր է յենթարկվել ֆաշիստներին պրոֆուկացիային, մորոնք ամեն կերպ հրահրելով քաղաքացիական պատերազմը յերկրում և իմպերիալիստական պատերազմը սահմանի աշն կողմում՝ կռուելին խաբել ժողովրդական մասսաներին և աշնպիսի տալովորութիւնն ստեղծել, թէ դեպի քաղաքացիական պատերազմը և պատերազմական բարդութիւնները, իբր, տանում են հենց ժողովրդական ճակատի կուսակցութիւնները և խաղաղութիւնը պաշտպանող պետութիւնները։

Յեւրոպայի նորագույն քաղաքական պատմութիւնն մեջ մենք ունենք դեպի ֆաշիզմը յեղած վերաբերմունքի յերկու կարեւորագույն ուսանելի որինակներ, մորոնք բոլորովին հակառակ հեռանկարներին յեն հասցրել։

Յեթն Գերմանիայում սոցիալ - դեմոկրատական լիդերները հրաժարվում էին բանվոր դասակարգի դործողութիւնների միասնութիւնն հաստատելուց և հենց դրանով հեշտացրին ֆաշիստներին՝ իշխանութիւնն գլուխ անցնելը, ապա Ֆրանսիայում մենք այլ որինակ ունենք։ Ֆրանսական պրոլետարիատը կոմունիստական ու սոցիալիստական կուսակցութիւնների միասնեղ յերաշխիքներին չնորհիվ և ֆաշիստական մտանդի դեմ ժողովրդական ճակատի հիման վրա անշեղորեն պայքարելու քաղաքականութիւնն չնորհիվ հասավ աշն բանին, վոր ֆաշիզմին վնասական հակահարված է տրված, և նրան չհաջողվեց իր տիրապետութիւնը հաստատել։ Այս պրոլետարիատի ու դեմոկրատիայի խոչորագույն հաղթանակն է Յեւրոպայում աշն բանից հետո, յերբ ֆաշիզմը Գերմանիայում իշխանութիւնն պրուխ անցավ։ Յեւմյուս կապիտալիստական յերկիրների աշխատավորները կարող են ու պետք է շատ բան սովորեն ֆրանսական պրոլետարիատից։ Բայց այդ հաջողութիւնները Ֆրանսիայում միայն տուա-

ղին հաջողութիւններն են։ Պահանջվում է այդ նվաճումներին ամրապնդումը և հետագա հարձակում ֆաշիզմի վրա։ Ժողովրդական ճակատը վարկարեկելու և վիժեցնելու ամեն մի մործ պետք է հանդիպի բոլոր բանվորներին, բոլոր հակաֆաշիստներին տանալիճուական հակահարվածին։ Ֆաշիստական ուժերի ի մի հաւաքվելը յերկրում, աճող ֆաշիստական ազդեցիկան հարեան յերկիրներում, դատելով հարուստ իտալական դեպքերը պարզաստ են պրոլետարիատին ու բոլոր հակաֆաշիստներին աշն մասին, վոր նրանք պետք է տանապատկեն իրենց ջանքերը ֆաշիզմի դեմ մղվող պայքարում, ել ավելի ամուր և ավելի հաստատուն կերպով կռեն միասնական ժողովրդական ճակատը։

Հիմքեր ձևան կառնածելու աշն մասին, վոր աշն դիմը յենանդադին ու հաստատակամորեն կկիրառվի մորպես միակ ճիշտ դիմը՝ աճող ֆաշիստական ազդեցիկայի դեմ մղվող պայքարում։ Բայց Ֆրանսիայում ժողովրդական ճակատ պահպանելն ամենին ել չի նշանակում, թէ բանվոր դասակարգն ինչ գնով ել լինի պաշտպանելու յեն աշմյան կառավարութիւնը։ Կառավարութիւնն կաղմը կարող է մոխիտիւնել, բայց ժողովրդական ճակատը պետք է մնա և անընդհատ ամրանա։ Յեթն դուրս գալով դոյութիւնն ունեցող կառավարութիւնը մորեկ պատճառով ի վիճակի չէ ժողովրդական ճակատի ծրագիրը կիրառելու, յեթն նա ներքին ու արտաքին թշնամու հանդեպ նահանջի ճանապարհ բռնել, յեթն նրա քաղաքականութիւնը տանի դեպի ժողովրդական ճակատի վարկարեկումը և, աղալիտով, թուլացնի ֆաշիստական հարձակմանը տրվող հակահարվածը, աշն ժամանակ բանվոր դասակարգը, շարունակելով ամրացնել ժողովրդական ճակատի կապերը, պետք է ձգտի այդ կառավարութիւնը մոխարինել աշնպիսի մի կառավարութիւնով, մորը հաստատակամորեն կկիրառի ժողովրդական ճակատի ծրագիրը, մորն ընդունակ կլինի հաղթահարելու ֆաշիստական մտանդը և ապահովելու ֆրանսական ժողովրդի դեմոկրատական ազատութիւնները, նրա պաշտպանութիւնն արտաքին ֆաշիստական ազդեցիկից։

Ժողովրդական ճակատը Ֆրանսիայում պահպանելու և ամրացնելու հետ միասին, տաննին ուշադրութիւնն արժանի յենանդիական բանվոր դասակարգի բոլոր ջոկանների դործողութիւններին միասնութիւնն ծախալումը ֆաշիզմի և պատերազմի դեմ։ Ինչպես հայտնի յեն՝ Անգլիան հակալական դեր է խաղում

ամբողջ միջազգային քաղաքական կյանքում: Նրա դերը վերո-
շարի կերպով ազդում է բուրժուական դեմոկրատիայի մի առ-
բողջ շարք յերկիրներին միայն և ընդհանուր միջազգային դրուժյան
միջոց: Այժմյան ամբողջ իրադրությունն առանձին ուժեղությամբ
առաջադրում է Անգլիայի բանվոր դասակարգի՝ ազգային և մի-
ջազգային մասշտաբով ունենալիք դերի հարցը: Այդ բացառիկ
պարտականություններն են դնում նրա միջև՝ Ֆաշիզմի դեմ և խա-
ղաղության պահպանման համար պայքարելու գործում, ինչպես
նաև բանվորական շարժման միջազգային միասնությունն առեղ-
ծելու գործում: Անգլիական բանվոր դասակարգն ամբողջ առաջ
է դեմոկրատական ազատություններ ձեռք բերել, քան մյուս յեր-
կիրների աշխատավորները: Նրա նվաճած դեմոկրատական ու-
ժիմը նրան հնարավորություն է տալիս իր յերկրի քաղաքակա-
նություն վրա ամբողջ ներգործելու, քան մի շարք այլ յերկիր-
ների պրոլետարիատը: Անգլիական բանվորներն ունեն հզոր մի-
ջոցներ՝ պայքարելու դեմոկրատիայի համար, խաղաղության
պահպանման համար, Ֆաշիզմի դեմ և մասնավորապես իսպա-
նիայի Ֆաշիստական բռնացողների ու դերմանական, խաղաղական
և պրոտոպառական ինտերվենտների դեմ:

Կասկած չկա, վոր Անգլիայի բանվոր դասակարգը, վորն
ունի չարտիստական շարժման պանծալի տրադիցիաները, այն
բանվոր դասակարգը, վորի միջավայրում կազմակերպվեց Մարք-
սի ու Ենգելսի I Ինտերնացիոնալը, և վորը ստեղծել է հուժեղ ու
միասնական պրոֆիտությունական կազմակերպություններ, իր մեջ
բաժանաչափ ուժ և կամք կունենա հաղթահարելու բոլոր այն
խոչընդոտները, վոր ընկած են Ֆաշիզմի ու պատերազմի դեմ
պայքարելու միասնական ժողովրդական ճակատ ստեղծելու ճա-
նապարհին, և արժանապատվությամբ կկատարի իր ինտերնացիո-
նալ պարտականությունները՝ դեմոկրատիան, կուրուրան ու
խաղաղությունը պաշտպանելու գործում:

IV

Հզոր ժողովրդական ճակատ ստեղծելու գործում վճռոգա-
կան դերը բանվոր դասակարգին է պատկանում: Բանվոր դա-
սակարգը կարող է և պետք է իր շուրջը համախմբի բոլոր աշ-
խատավորներին, դեմոկրատիայի բոլոր ուժերը, բոլոր հակա-
Ֆաշիստներին: Ներկա մոմենտին, կատարյալ Ֆաշիստական ազ-

րեսիայի պայմաններում, ագրեսիա, վորը, ինչպես այդ ա-
ռանձնապես ցայտուն կերպով ցուցադրեց դադադած դերմանա-
կան Ֆաշիստների Նյուրենբերգյան համագումարը, ուղղված է
ամեն մի դեմոկրատիայի դեմ, յերբ անհրաժեշտ է ամեն ինչ
անել իսպանական դեմոկրատական հանրապետությունը վերելու
համար, յերբ աշխարհի գլխին կախվել է նոր համաշխարհային
իմպերիալիստական պատերազմի չարագուշակ սպառնալիքը, վոր
միայն անքույատրելի յե պրոլետարիատի ուժերի անջատված
լինելը, այլև անքույատրելի յե ու հանցագործութուն է ամեն
մի հապաղում միասնական ճակատ ստեղծելու գործում: Այդ
հապաղումը ձեռնառու յե Ֆաշիզմին և կարող է նոր ծանր հար-
վածներ հասցնել պրոլետարիատին ու դեմոկրատիային:

Բանվոր դասակարգը չպետք է հանդուրժի այլևս այնպիսի
մի դրություն, վոր այն մոմենտին, յերբ իսպանիայում սո-
ցիալիստական և կոմունիստական բանվորները միասին կռվում
ու մեռնում են ռազմաճակատներում, Ֆաշիստական բարբարո-
սությունից պաշտպանելով վոր միայն իսպանական ժողովրդի
ազատությունն ու դեմոկրատիան, այլև ամբողջ Յեվրոպայի
դեմոկրատիան ու կուրուրան, գտնվում են II Սոցիալիստական
Ինտերնացիոնալի լիդերներ, վորոնք ամեն տեսակ ճանապարհ-
ներով ուղղում են խորացնել պրոլետարական շարքերի պառակ-
տումը:

Այն մոմենտին, յերբ Ֆաշիստ խռովարարներն իսպանիայում
սպանում են ռազմաճակատներում ուսուցիչ կանգնած սոցիալիստ
և կոմունիստ բանվորներին, մահ և կործանում են բերում ամ-
բողջ յերկրին, Սոցիալիստական Ինտերնացիոնալի ղեկավարու-
թյունը համառոտն հրաժարվում է կոմունիստական Ինտերնա-
ցիոնալի հետ միատեղ հանդես գալ և ողնություն կազմակերպել
իսպանական ժողովրդին: Սոցիալիստական Ինտերնացիոնալի
քարտուղար Ֆրից Ադլերն ամբողջ լավ բան չի գտնում, քան յեթե
հանդես գալ յերկար հողմածներով ի պաշտպանություն հակա-
հեղափոխական տրոցկիստական-դինովյեյական տեռորիստների,
վորոնք ձգտում են յին ուստավրացիայի յենթարկել կապիտալիզմը
Խորհրդային Միության մեջ:

Սոցիալիստական Ինտերնացիոնալի միջանի լիդերները վոր-
ձում են յին ողտադործել դերմանական պահնորդական բաժնի ուղ-
ղակի գործակալներ հանդիսացող այդ դարչելի մարդասպանների
և սոցիալիստական յերկրի դավաճանների, լրտեսների ու դիվեր-

սանտները վերաբերմամբ տեղի ունեցած դատական պրոցեսը, վորպեսզի վիժեցնեն միասնական ճակատը:

Մի շարք յերկրներում կան սոցիալ-դեմոկրատական կառավարութիւններ կամ կոալիցիոն կառավարութիւններ, վորոնց մեջ մասնակցում են սոցիալ-դեմոկրատական միւնիստրներ, սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնների և Սոցիալիստական Ինտերնացիոնալի առաջնորդներ: Բայց այդ կառավարութիւնները վո՛չ միայն չեն համերաշխւում խորհրդային Միութեան կողմից խաղանական հարցում բռնած դիրքին, վորը միակն է, վոր համապատասխանում է խաղանական ժողովրդի շահերին և դեմոկրատիայի ու խաղաղութեան պաշտպանութեանը, — այլև իրենց վարքագծով աջակցում են չմիջամտելու կեղծավոր քաղաքականութեանը և Փաշխտական ինտերվենտներին ու խաղանական ժողովրդի դահիճներին ներդրածոն հակահարված տալու գործին փաստորեն արգելք են հանդիսանում:

Համաշխարհային պրոլետարիատի շահերի տեսակետից այդպիսի ամենապիտանակար քաղաքականութեան համար պատասխանատւութիւն են կրում, անշուշտ, այդ քաղաքականութեանը կիրառող սոցիալիստական լիդերները: Բայց պատմական ճշտութեան ժխտում կլինի, յեթե մենք սկսեմք լուրջաբար տալ պատասխանաւորութեան մասնաւորապէս վոր ընկնում է Սոցիալիստական և Ամստերդամյան ինտերնացիոնալների բոլոր գործիչների աւելումների վրա: Ձե՞ վոր լիդերները խոսում և գործում են այդ ինտերնացիոնալների անունից՝ վորպէս նրանց լիազորները: Վորչափով նրանք թույլ են տալիս այդպիսի քաղաքականութեան կենսագործում, նրանք չեն կարող երաժարվել իրենց պատասխանատւութեանը: Նրանք պետք է դիտակցեն ընդհանուր պատմական պարտականութիւնը՝ կոմունիստների հետ միասին անել ամեն ինչ Փաշիզմի ճանապարհը փակելու և խաղաղութիւնը պահպանելու համար:

Փաշիզմի և պատերազմի դեմ մղվող պայքարի ժողովրդական ճակատի ստեղծման ու ընդլայնման գործում բացառիկ կարեւոր նշանակութիւն է ստանում հիմնական կապիտալիստական յերկիրների բանվոր դասակարգի միասնական ճակատը, կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնների, հավասարապէս նաև զանազան քաղաքական ուղղութիւնների պատկանող պրոֆմիութիւնների գործողութիւնների միասնութիւնը, իսկ միջազգային մասշտաբով — Կոմունիստական, Սոցիալիստ-

տական և Ամստերդամյան ինտերնացիոնալների միատեղ գործողութիւնները: Դեպի գործողութիւնների այդ միասնութիւնը տանող ճանապարհին ընկած բոլոր խոչընդոտները վորքան կարելի յե շուտ պետք է վերացվեն: Դրա համար հսկայական, լարված ամենորոյս աշխատանք է պատուժ կոմունիստական կուսակցութիւններին, ինչպէս նաև պրոլետարական միասնութեան և ժողովրդական ճակատի բոլոր կազմակերպիչներին՝ Սոցիալիստական ու Ամստերդամյան ինտերնացիոնալների շարքերից:

Դեռ Կոմունիստական ինտերնացիոնալի VII կոնգրեսն իրեն պարզ հաշիւ էր տալիս, վոր բանվոր դասակարգի մեջ գոյութիւն ունեցող պառակտման վերացումը հեշտ գործ է: Ձեռքի մի շարժումով և սոսկ ցանկութեամբ չես վերացնի այն ամենը, ինչ դասակարգային թշնամիները, նրանց գործակալներն ու աջակիցները յերկար տասնամյակների ընթացքում կատարել են աշխատավորների ուժերը բաժան-բաժան անելու համար: Կոնգրեսից հետո յեղած ամբողջ վորձն է՛լ ավելի պարզ ցույց տվեց, վոր բանվոր դասակարգին ազգային ու միջազգային մասշտաբով դեպի գործողութիւնների միասնութիւն տանող ուղին — այդ ամենն ինչ էլ ուղիղ, հարթ, ասֆալտապատած մանապարհ չէ: Այդ բավական դժվար ու զիջողաճճ, հաճախ տատակոտ ու զառիթափ ճանապարհ է: Միասնութեան բացահայտ ու զարմանի թշնամիները չեն դադարում այդ ճանապարհին զանազան տեսակի խոչընդոտներ ու արգելքներ հարուցել: Հարկ է լինում յորքանայնոք քայլը մեծ ջանքերով, համառ աշխատանքով և պայքարով նվաճել: Հարկ է լինում համբերութեամբ պարզաբանել և համոզել մոլորվողներին: Հարկ է լինում շարունակ քաջալերել տատանվողներին ու թերահավատներին: Հարկ է լինում անխնայ մերկացնել սարսափ անողներին ու յերկերեսանիւններին: Հարկավոր է համառ պայքար մղել մի շարք խորամանկ սուփեստների դեմ, ճարպիկ պոլիտիկաների ու յեղիված դեմագոգների դեմ, վորոնք ամեն կերպ աշխատում են ներշնչել շարքային, քաղաքականապէս անիրաճ բանվորին, թե յերկու անգամ յերկու չորս չէ, այլ յերեք է, թե բանվոր դասակարգի միասնական ճակատը չի՛ ավելացնում նրա ուժերը, այլ, իբր թե, տանում է միայն դեպի Փաշխտական ագրեսիայի ուժեղացում: Յեւ միևնույն ժամանակ չպետք է յենթարկվել միասնութեան թշնամիների պրոֆիկացիոն մանյովրներին, այլ միատեղ պայքարի համար անդադրում պետք է յեղբայրական ձեռք մեկնել աշխատավորների բոլոր կազմակերպութիւններին՝ մինչև իսկ այն ժա-

մանակ, յերբ նրանց դուրս են կանգնած միասնության բացահայտ հակառակորդները: Յուրաքանչյուր կոմունիստ, յուրաքանչյուր գիտակից բանվոր վո՛չ մի րոպե չպետք է մոռանա, վոր՝ միջադեպին պրոլետարիատի միասնության հակառակորդները, Սիարինները և ելի ինչ անուն էլ վոր նրանք ունենան, չափազանց դո՛հ կլինեյին, յեթե վոր նրանց սարսուռի ու պրոլետկացիայի հետևանքով կոմունիստներն իրենք հրաժարվեյին միասնության համար պայքարելուց, ժողովրդական ճակատի քաղաքականության հետևողական կենսադրժումից: Այդ միայն կոլուբացիներ հիշյալ լիդերների պառակտողական դերը և ժամանակավորապես նրանց կիրկեր պրոլետարիատի ու պատմության խառնազույն դատավճռից: Պետք է կարողանալ չթուլացող իդեոլոգիական պայքար մղել բանվորական շարժման շարժերում գոյություն ունեցող ռեֆորմիզմի և այլ հակամարտութեան հոսանքների դեմ ու միևնույն ժամանակ անդադար պայքարել միասնական ժողովրդական ճակատ տեղծելու համար, ֆաշիզմի ու պատերազմի դեմ ուղղված ամենորոյա պայքարում ուշի-ուշով խուսափել գործողությունների միասնությունը վիժեցնելուց:

Քսաներկու տարի առաջ, համաշխարհային իմպերիալիստական պատերազմի նախորդակին մեծ Լեհիմը, սոցիալիզմի համար մղելիք ապագա պայքարի համար հավաքելով բանվոր դասակարգի ուժերը, պրոլետարիատի շարքերի միասնության հսկայական նշանակության մասին ասել է.

«Միասնությունը, իրոք, անհրաժեշտ է բանվորներին: Յեւ վ ամենից ավելի անհրաժեշտ է հասկանալ, վոր բացի հենց բանվորներից՝ վո՛չ վո՛ք նրանց միասնությունն չի՝ «տա» և վո՛չ վո՛ք ի վիճակի չէ ոգնելու նրանց միասնությանը: Միասնությունը չի՝ կարելի «խոստանալ»—այդ դատարկ պարծենկոտություն, ինքնախաբեյություն կլինի. միասնությունը չի՝ կարելի «ստեղծել» ինտելիգենտական խմբիկները «համաձայնությունից»—այդ ամենատխրալի, ամենամիամիտ և ամենատգիտական մոլորություն է:

Միասնությունը հարկավոր է նվաճել, և միայն բանվորներն իրենք, գիտակից բանվորներն իրենք են, վոր ի վիճակի յեն այդ ձեռք բերելու համառ, աննկուն աշխատանքով:

Չկա՝ ավելի հեշտ բան, քան արշինանոց տառերով գրել «միասնություն» բառը, քան խոստանալ այն, դրան կողմ-

նակից «հռչակել» իրեն: Իրականում, սակայն, միասնությունն առաջ շարժել կարելի յե առաջավոր բանվորները, բոլոր գիտակից բանվորների աշխատանքով ու կազմակերպումով միայն...

Այդ հեշտ է: Այդ պահանջում է աշխատանք, աննկունություն, բոլոր գիտակից բանվորների համախմբվածություն:

Բայց առանց այդպիսի աշխատանքի, բանվորական միասնության մասին խոսելն անգամ ավելորդ է»¹:

Լեհիմի այս նշանավոր խոսքերը ներկա ժամանակաշրջանում առանձնապես արժեքավոր ցուցում են բոլոր կապիտալիստական յերկիրները բանվոր դասակարգի համար:

* * *

Կոմունիստական Ինտերնացիոնալի VII կոնգրեսից հետո տեղի ունեցած անցքերի ամբողջ ընթացքն անխտելիորեն հաստատում է, վոր կենսականորեն անհրաժեշտ է իրագործել կոնգրեսի պատմական լողունները բանվոր դասակարգի միասնության մասին և մարդկության վոխերիմ թշնամու—ֆաշիզմի դեմ—պայքարելու ժողովրդական ճակատի մասին: Կոմունիստական Ինտերնացիոնալը և առանձին յերկիրների կոմունիստական կուսակցությունները, վորոնք հենվում են աշխատավոր մասնանների աջակցության վրա, մի րոպե անգամ չեն դադարի բոլոր ուժերով պայքարելու այդ միասնության իրականացման համար: Նրանք չեն յենթարկվի վո՛չ մի պրոլետկացիայի, —պրոլետկացիաներ, վորոնք ուղղված են բանվոր դասակարգի մեջ պառակտումը խորացնելու և ժողովրդական ճակատը ձախողելու կողմը: Յեւ, չնայած Սոցիալիստական ու Սոստերդամյան ինտերնացիոնալներին պատկանող սարսուռիկների դիմադրությանը՝ միջադեպին պրոլետարիատը կհասնի իր մարտական միասնությանը:

Ֆաշիզմի ու պատերազմի դեմ հարկավոր են վո՛չ քե դատարկ խոսքեր, վո՛չ քե պլատոնական ցանկություններ, այլ՝ գործողություններ: Այդ գործողությունների համար անհրաժեշտ է միավորել բանվոր դասակարգի բոլոր ուժերը և անշեղարեմ կենսագործել ժողովրդական մականի փառափառությունը:

1936 թ. նոյեմբեր:

Թարգմ. Հ. Տ.-Հովհաննիսյան
Խմբ. Հ. Հովհաննիսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբազրիչ Վ. Զիդեղյան
Կոնսր. սրբազրիչ Լ. Աբովյան

Գլավլիտի լիազոր Ի—4905, հրատ. № 482,
Պատվեր № 149, տիրաժ 10.000
Հանձնվել է արտադրության 28/VII 1937 թ.
Ստորագրվել է տպագրելու 31/VII 1937 թ.
Գինը 35 կոպ.

Հայկուսհրատի տպարան, Յերևան, Մկրտիչևսկայն № 71

20

ՀՀ Ազգային գրադարան



NL0987310

28688

Г. ДИМИТРОВ
НАРОДНЫЙ ФРОНТ БОРЬБЫ
ПРОТИВ ФАШИЗМА И ВОЙНЫ

Армпартиздат, Ереван, 1937